



ԱՎԱՆԱ

Գուպա կղզին Անգլիանց մէջ ամենէն մեծն է, որ արժանապէս Մարգարիտ Անգլիականց կը կոչուի: Այս կղզին առջի անգամ զրտնոյն Գոյումպոս եղած է 1493ին, որուն տիրելով ապա Սպանիացիք՝ բոլոր բնակիչը սրէ անցուցին: Ամբողջ կղզւոյն բնակիչը գրեթէ մէկ միլիոնն է, կէսն սպիտակ և միւս մասն սարուկք և աղատեալք: Արևմտեան կողմէն զէպ 'ի արևելք կ'երկայնի պար մի ան: տառախիտ լեռանց, որոց մէջ բնտրի յոյս և թիզ-տէ-Գարգուիկոյ 7,000 ոտնաչափ բարձր են, իսկ Բան-տէ-կուսյապոն՝ որ հիւսիսային կողմը կ'ընկնայ, ունի 1,500 ոտք բարձրութիւն: Ծովափունքն տափարակ են և ունին բազում նաւակոյտ. ամեն կողմանէ մանր վտակներ կը թափին 'ի ծով: կլիմայն ջերմ է և առողջ քան ուրիշ կղզեացիք: կը բերէ առատ փայտ, շաքար, քաֆէ, ծխախոտ, բամբակ, գազայ և լեղակ:



Ա. Վ. Ա.




Ա. Ն. Ժ. Ա.

Գուպայի գլխաւոր քաղաքն է Ավանա, որուն պառակերը կը ներկայացընենք ընթերցողաց, որ կը բարձրանայ 'ի հիւսիսային ափունս կղզւոյն, հիւսի-



Ն Ա.



Է Բ

սային լայնութեան 23,9 աստիճանին տակ : Ունի սա անբոյթ նաւամատոյց , ջրանցքով հաղորդեալ ծովուն հետ , որոյ երկայնքն գրեթէ կէս մղոն է ,

այնչափ նշանաւորք թէ ճարտարապետութեան մասին և թէ ամրութեան : Ունի շրջափակ մը ցլամարտից համար , համալսարան , կղերանոց և տնկաբա-

լայնքն 300 մեդր , իսկ խորութիւնն ութ կամ տասն բաղկաչափ . աւազան մ'է երկայնաձև , շրջապատեալ 'ի լեռանց' պաշտպանելով զնա 'ի չորեք կուսէ' յամենայն հողմոց : Քաղաքը այս աւազանին արեւմտակողմը կառուցեալ է , տեսակ մը սարաւանդի վերայ . թէ սա և թէ ջրանցքն ամրացեալ են դժբաւոր բերդերով և բազմաթիւ պատնէշիւք որ կը ձգին ընդ երկայնութիւն ա-

փանց ջրանցքին :

Ավան այի տուններն միայարկ են , փողոցներն անձուկ և օձապտոյտ , և քարայտակ չըլլայնուն՝ անձրեային եղանակաց մէջ ցեխոտ ու շաղախոտ : Շէնքերն՝ ինչպէս քաղաքապետին ապարանքն , ծովակալին պալատըն , պինարանն և ուրիշ շինութիւնք՝ չեն

նութեան ճոխ պարտէզ: Եկեղեցեաց մէջ ոմանք գեղեցիկաչէն են, ինչպէս մայր եկեղեցին, որ երևելի է իր եղական ճարտարապետութեամբը. թուի թէ ճարտարապետն արևադարձային տնկոց բազմատեսակ զանազանութիւնքն իրեն օրինակ առած ըլլայ, և ըստ այնմ բազմաձև չինած գեղեցիկցին. վասն զի թէպէտ չէ մեծաչէն, այլ գեղեցիկաչէն՝ ձևոց զանազանութեամբ: Կայ այս եկեղեցւոյս մէջ Գրիստափոր Գոյրմզոսի մարմինը բրգաձև տապանի մէջ:

Ավանա չէ այնչափ յառաջադէմ՝ ի ձեռագործ արուեստս, եթէ ՚ի բայ առնունք յիռզոյադի և փաթութեալ ծխատերևոյ գործարանքը. բայց վաճառականութիւնն շատ բարգաւաճ և օր քան զօր յառաջադիմելու վրայ է: Իր գեղեցիկ կապտազոյն ծոփն միշտ լի է առագաստաւոր ու շողեմուղ նաւերով, ուր կը յաճախեն ամենայն ազգաց վաճառականական նաւերը:

Քաղաքին յըրակայ կողմանքն շատ զուարճալի են. որուն կանաչազարդ բլրոց վրայէն որ կողմն ալ դարձընենք աչքերնիս՝ թէ քաղաքին և թէ ծոփուն վրայ, համատարած բնութեան հիանալի տեսարաններ կը բացուին առջևնիս. բոլոր հորիզոնն այդեստանեօք և արմաւենեօք զարդարուած է և անուշահոտութիւն մը կը բուրէ յամենուստ:

Զարմանալի զուարթութիւն մը կը զգայ ուղևորն երբ կը տեսնայ զՍվանա ՚ի հեռուստ. վասն զի իր գեղեցիկապայոյտ ծոփն և անուշարոյր օդն և կանաչազարդ բլուրքն հիացմամբ կը ընուն նորա միտքը: Հիացումը կը կրկնանապատկի յառաջելով ոտն առ ոտն. վասն զի քաղաքն ու ապառաժք աւելի ևս կը շքեղանան ՚ի տեսութիւն: Բայց այս սփոփական ուրախութիւնը կը փոխուի յանկարծ յահարկութիւն, երբ հասնելով ծոցին բերանը՝ ուսկից պիտի անցնի, կը տեսնայ յաջմէ և յահեկէ պսակեալ ուրբաձիգ անօթներով:

Անժէր գաղղիական քաղաք մ'է, զոր Հռովմայեցիք Յուլիոմակոս կը կոչէին, և ապա Անդիկաշիա անուանեցաւ: Առաւ ՚ի Սաքսոնաց 464ին առաջնորդութեամբ Ողոսքրի, և յետոյ ՚ի թագաւորաց փրանկաց: 845ին այրեցաւ ՚ի Նորմանտացւոց, և 1793ին մերձ յԱնժէր խորտակեցաւ Վանտէացւոց իննըսուն հազար զօրաց բանակ մը: Այս քաղաքը լի էր ժամանակաւ վանորէիւք և եկեղեցեօք:

Անժէր ամբիթէատրոնի ձև ունի, և երեք մաս կը բաժնուի. բուն քաղաքը՝ Մէնի ձախակողման ավանց վրայ է, մաս մի քաղաքին կողմաձև գետին մէջ, և երրորդ թաղ մը Տ'ուրըր կոչեցնալ, նոյնպէս գետին ձախակողմը: Երբեմն ևս քաղաք կը կառուէր սա, բայց այս օր հին քաղաքն միայն՝ որ է ՚ի ձախակողմն Մէնի, կրնայ մասամբ արժանանալ նոյն անուան. վասն զի նորա կառուոյց թաղերն գերազանց են շինուածոց գեղեցկութեամբ ու վայելչութեամբ:

Եթէ կայ քաղաքին մէջ նշանաւոր և հին յիշատակարան մը, Ս. Մարիտիսի եկեղեցին է, գոթացի ճարտարապետութեամբ: Անժուայ դքսից հին դղեակն ՚ի սևաքարէ՝ ախուր երևոյթ մ'ունի, շինեալ Մէն գետին եզերքը: Անժէր ունի զինուորական դաշտ մի, խաղիտղ գնտակաց, ճեմարան համալսարանական, թանգարան և գրատուն 30 հազար մատենիւք: Քաղաքին մօտերը սևաքարի հարուստ հանք մը կայ:

Հօս ծնած են Մենաժ բազմահմուտ ստուգաբանն, Պէռնիէ բժիշկ և ճանապարհորդ անուանի, և Յովհաննէս Պոտէն այր իմաստուն: